

---

---

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ  
ՄԱՐՔՍՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Մ. Վ.

Մարքսյան դարաշրջանը համընկավ ազատ մրցակցությունից մենաշնորհ կառույցների առաջացման և զարգացման հետ: Բնականաբար, մարքսյան տեսաբանները «մրցակցություն» և «մենաշնորհ» հասկացությունները դիտարկելիս, իրենց զինանոցում ունենալով տվյալ ժամանակաշրջանի տեսական գիտելիքները, վերլուծության համար պետք է օգտագործեին այդ տեսական զինանոցում առկա գործիքները<sup>1</sup>:

Մենաշնորհի և մրցակցության առանձին հիմնահարցեր դիտարկված են դեռևս Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի վաղ շրջանի աշխատություններում: Մասնավորապես, Ֆ. Էնգելսի «Ուրվագծեր քաղաքատնտեսության քննադատության շուրջ» (1843-1844), «Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում» (1844-1845) և Կ. Մարքսի «Փիլիսոփայության աղքատությունը» (1847) աշխատություններում փորձ է արված տալ մրցակցության և մենաշնորհների զարգացման դինամիկան, դրանց փոխկապակցվածությունը և դերը կապիտալիզմի զարգացման ու կործանման գործընթացում:

Խորհրդային ժամանակաշրջանի տնտեսագիտական միտքը, կադապարված լինելով մարքսիստական գաղափարախոսությամբ, մեծ մասամբ ձգտել է հավատարիմ մնալ դրա սկզբնաղբյուրներին, իսկ եզրակացությունները բխել են դրանցում կատարված ընդհանրացումներից: Այս առումով, ուշագրավ է Պ. Շայյուտինայի հետազոտությունը: Նա, ուսումնասիրելով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի վաղ շրջանի աշխատություններում մենաշնորհների և մրցակցության վերաբերյալ նրանց հայացքները, հանգել է հետևյալ եզրակացությունների. 1. Մրցակցությունը կապիտալիստական արտադրության զարգացման գործընթացում քչերի ձեռքում կապիտալի համակենտրոնացման միտում է առաջ բերում: Այդ դրույթը, Մարքսի և Էնգելսի վաղ շրջանի շատ աշխատանքներում անմիջապես կապված չլինելով հիմնախնդրի հետ, հետագայում կարևոր դեր խաղաց մենաշնորհի մարքսիստական ըմբռնման ձևավորման մեջ: 2. Ինչպես ֆեոդալական, այնպես էլ բուրժուական մենաշնորհի, ինչպես նաև մրցակցության ընդհանուր հիմքը մասնավոր

---

<sup>1</sup> Ձեռնամուխ լինելով սույն հարցի քննարկմանը՝ նպատակ չենք դրել առհասարակ զբաղվել մարքսիզմի քննադատությամբ և, մասնավորապես, մրցակցության ու մենաշնորհների մեկնաբանության քննադատությամբ: Այս առումով, տողերիս հեղինակին հոգեհարազատ է Յա. Պևզների տեսակետը. «...չնայած հետագա շարադրանքի քննադատական բնույթին, բնավ էլ չեմ ձգտում այն բանին, որ տվյալ աշխատանքը երևա որպես «հակա «Կապիտալ» (Певзнер Я. А., *Экономическое учение Карла Маркса перед судом двадцатого столетия, М., 1996, с. 8*) կամ առավել ևս հակամարքսիստական: Օգտվելով շուկաների վերլուծության վերաբերյալ ժամանակակից տեսական և գործնական լծակներից՝ մենք փորձում ենք ներկայացնել մրցակցության և մենաշնորհների մարքսյան մեկնաբանությունների պատմական բնույթը և էությունը:

սեփականությունն է: 3. Մրցակցությունը, որը ծնվում է մենաշնորհից, անխուսափելիորեն նորից մենաշնորհ է ծնում՝ բուրժուական մենաշնորհ: 4. Մրցակցությամբ ծնված մենաշնորհն ի գորու չէ կանգնեցնելու մրցակցության հոսքը, «սինթեզը» մրցակցության և մենաշնորհի փոխգործողությունն է՝ ավելի են սրում բուրժուական հասարակության հակասությունները: 5. Մրցակցությունը և մենաշնորհը հավերժ չեն: Դրանք, ինչպես նաև մասնավոր սեփականության վրա հենված ողջ բուրժուական հասարակությունը ենթակա են կործանման<sup>2</sup>:

Ֆ. Էնգելսը, «Ուրվագծերում...» քննարկելով մենաշնորհի և մրցակցության հարաբերությունը, եզրակացնում է. «Մենաշնորհը ծնում է ազատ մրցակցություն, վերջինս իր հերթին՝ մենաշնորհ: Դրա համար դրանք երկուսն էլ պետք է կործանվեն, և դրանց ծնող սկզբունքի վերացմամբ կվերանան և այդ դժվարությունները»<sup>3</sup>: Ըստ Ֆ. Էնգելսի, ինչպես մենաշնորհի, այնպես էլ մրցակցության նյութական հենքը մասնավոր սեփականությունն է: Այդ հենքի վրա են առաջանում ինչպես մենաշնորհը, այնպես էլ մրցակցությունը: Հետևաբար, մասնավոր սեփականության վերացմամբ կվերանան և՛ մրցակցությունը, և՛ մենաշնորհը:

Սակայն կյանքը ցույց տվեց, որ մասնավոր սեփականության վերացումը բնավ էլ չհանգեցրեց մրցակցության և մենաշնորհի վերացմանը: Ճիշտ է, պետական սեփականության տիրապետության պայմաններում վերացավ ազատ մրցակցությունը: Մրցակցությունը ձևափոխվեց, բայց մենաշնորհը չվերացավ: Սեփականության բազմաձևությամբ դրսևորված մենաշնորհին փոխարինեց պետական մենաշնորհը, որը, որպես սոցիալիստական պետության գործիքներից մեկը, միշտ չէ, որ նպաստել է (ավելի հաճախ խոչընդոտել է) տնտեսության և հասարակության զարգացմանը: Առհասարակ, մենաշնորհներն իրենց բնույթով հակված են ամեն տեսակի մրցակցության փորձի խոչընդոտմանը՝ դրանով ապահովելով կայուն գերշահույթներ ստանալու պայմանների գոյությունը: Այդ էր պատճառը, որ տնտեսագիտական մտքի ծանրության կենտրոնը ազատ շուկայական տնտեսությունից տեղափոխվեց կարգավորվող տնտեսություն, կարգավորվող շուկա: Եվ պատահական չէր, որ արդեն XIX դ. վերջերին ԱՄՆ-ում և Կանադայում, XX դ. եվրոպական երկրներում մեկը մյուսի հետևից հակամենաշնորհային օրենսդրություններ ընդունվեցին, որոնք կոչված էին կարգավորելու մենաշնորհների գործունեությունը: Այսօր էլ սեփականության բազմաձևության պայմաններում կան և՛ մենաշնորհներ, և՛ մրցակցության տարբեր ձևեր:

«Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում» աշխատության մեջ Ֆ. Էնգելսը մրցակցության մասին ընդհանուր դատողությունները փորձում է տեղափոխել որոշակի հարաբերություններ: Դիտարկելով աշխատանքի շուկան և կռահելով, որ աշխատանքի շուկայից բանվորների դուրսմղումը (գործազրկությունը) պայմանավորված է մրցակցությամբ՝ նա հիմնավորված բացատրություն չի տալիս այդ երևույթին: Ըստ Ֆ. Էնգելսի՝ «Մեխանիկական հաստոցի վրա աշխատող ջուլիակը մրցակցում է ձեռքով աշխատող ջուլիակի հետ: Գործազուրկ կամ ցածր վարձա-

<sup>2</sup> Шалюгина П. Н., *Проблемы монополий в трудах К. Маркса и Ф. Энгельса, Курган, 1972, с. 17-а-17-б.*

<sup>3</sup> Маркс К. и Энгельс Ф., *Соч., т. 1, М., 1955, с. 569-570.*

տրրվող, ձեռքով աշխատող ջուլիակը մրցակցում է մի ուրիշ ջուլիակի հետ, որն աշխատանք ունի կամ բարձր աշխատավարձ է ստանում և ձգտում է դուրս մղել նրան: Բանվորների այդ մրցակցությունն իրար հետ արդիական հարաբերությունների ամենավատ կողմն է նրանց համար»<sup>4</sup>: Շուկաների վերլուծության ժամանակակից մեթոդների և մեթոդաբանության պրիզմայով դիտարկելիս Ֆ. Էնգելսի այս միտքն ավելի քան պարզունակ է հնչում: Շուկայի վերլուծությունը ենթադրում է նախ՝ դրա օբյեկտի (ապրանքատեսակի) առանձնացում և դիտարկում, երկրորդ՝ շուկայի աշխարհագրական (տարածքային) սահմանի, ինչպես նաև այդ սահմանում առկա սուբյեկտների առանձնացում և դիտարկում: Հետևաբար, աշխատանքի շուկայում ջուլիակագործների մրցակցությունը պետք է դիտել միայն որպես միևնույն շուկայի երկու սուբյեկտների միջև ընթացող մրցակցային գործընթաց: Հաստոցի վրա աշխատող ջուլիակը և ձեռքով աշխատող ջուլիակը միշտ չէ, որ տեղեկացված են միմյանց մասին: Դեռ ավելին, որպես կանոն, նրանք կարող են միմյանց մասին բացարձակապես պատկերացում չունենալ: Ի՞նչ են արտադրել, աշխատանքի ի՞նչ գործիքներով և որքա՞ն են արտադրել: Նրանց աշխատանքի գնահատական տվողը ջուլիակին վարձող ձեռնարկատերն է: Ուստի, ջուլիակի աշխատանքի հասարակական գնահատականը տրվում է ջուլիակների աշխատանքի ունակության (աշխատուժի) շուկայում: Ջուլիակների միջև մրցակցությունը դրսևորվում է միայն այդ շուկայում՝ համապատասխան աշխատուժի՝ առաջարկի ժամանակ: Ամենատրակյալ հացթուխի, դարբնի, էլեկտրոնային մասնագետի աշխատանքը չի կարող փոխարինել ջուլիակի աշխատանքին: Հետևաբար, ջուլիակների միջև մրցակցությունը դրսևորվում է միայն այդ շուկայում՝ համապատասխան աշխատուժի առաջարկի ժամանակ: Աշխատանքի ամեն մի առանձին տեսակ պայմանավորում է աշխատուժի առանձին շուկայի գոյությունը:

Կ. Մարքսը ևս մրցակցությունը դիտում է պատմական տեսանկյունից: Պ. Աննեկովին հղած նամակում (28. XII. 1846), քննադատելով Պրուդոնին, նա նշել է. «...Պրուդոնը անում է այն, ինչ բոլոր բարի բուրժուաները...Նրանք բոլորը մրցակցություն են ուզում առանց մրցակցության կործանարար հետևանքների: Նրանք բոլորը ցանկանում են անհնարինը, այսինքն՝ բուրժուական կյանքի պայմանները առանց այդ պայմանների անհրաժեշտ հետևանքների: Նրանք բոլորը չեն հասկանում, որ արտադրության բուրժուական եղանակը պատմական և անցողիկ ձև է, այն բանի նման, ինչպես պատմական և անցողիկ ձև էր ֆեոդալականը»<sup>5</sup>: «Փիլիսոփայության աղքատությունը» աշխատության մեջ, հարազատ մնալով Ֆ. Էնգելսի «Ուրվագծերում...» արված եզրահանգմանը, Կ. Մարքսը գրել է. «Գործնական կյանքում մենք գտնում ենք ոչ միայն մրցակցությունը,


<sup>4</sup> Էնգելս Ֆ., Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում (Կ.Մարքս և Ֆ.Էնգելս, Երկեր, հ. 2, Ե., 1986, էջ 351):

<sup>5</sup> Այստեղ չենք փորձում հիմնավորել՝ ո՞ր հասկացությունն ավելի ճիշտ կլինի օգտագործել՝ «աշխատանքի շուկա», թե՞ «աշխատուժի շուկա»: Այս առումով հակված ենք Ա. Կոտլյարի այն կարծիքին, որ առավել ճշգրիտ է «աշխատուժի շուկա» հասկացությունը (Котляр А., О понятии рынка труда (Вопросы экономики, 1998, N 1, с. 35):

<sup>6</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 27, М., 1962, с. 409.

մենաշնորհը և նրանց անտագոնիզմը, այլև նրանց համադրությունը, որը ոչ թե բանաձև է, այլ շարժում: Մենաշնորհն արտադրում է մրցակցություն, մրցակցությունն արտադրում է մենաշնորհ: Մենաշնորհները մրցակցում են միմյանց հետ, մրցակիցները դառնում են մենաշնորհներ»<sup>7</sup>:

Հարկ է նշել, որ ինչպես մենաշնորհը, այնպես էլ մրցակցությունը շուկային բնորոշ հասկացություններ են: Ընդ որում, դրանք, որևէ առանձին (որոշակի) շուկայում միաժամանակ հանդես գալ չեն կարող: Մենաշնորհ նշանակում է՝ շուկայում միակ վաճառող: Ուրեմն չկա այլ վաճառող, որի հետ նա կարողանար մրցակցել: Ինչ վերաբերում է «մենաշնորհները մրցակցում են միմյանց հետ...» մտքին, ապա այն ավելի քան խրթին դատողություն է: Պատկերացնենք, որ երկու առանձին շուկաներում կան տարբեր մենաշնորհներ: Առաջին շուկայի տիրույթը, որում մենաշնորհ ունի Ա: Ֆիրման, Ա-ն է, երկրորդինը, որում մենաշնորհ ունի Ա2 Ֆիրման, Բ-ն է (տե՛ս գծանկարը): Ա տիրույթն ընկած է «Օ» կետից ձախ, Բ-ն՝ աջ: Այս երկու տիրույթները չեն համատեղվում: Հետևաբար, անիմաստ է խոսել այդ տիրույթներում (շուկաներում) գտնվող մենաշնորհ ֆիրմաների մրցակցության մասին: Որպեսզի այդ մենաշնորհները մրցակցեն, պետք է միևնույն շուկայում հանդես գան: Մինչդեռ դրանց գործունեության տիրույթները տարբեր լինելով՝ չեն համատեղվում:



Մարքսի ուսմունքը քննադատեցին նաև իր ժամանակակիցները: Քննադատության հիմնական առանցքը «Կապիտալի» առաջին և երրորդ հատորների միջև եղած հակասության վերաբերյալ դրույթն է: Երրորդ հատորը լույս է տեսել Կ. Մարքսի մահից հետո: Կ. Մարքսը չէր կարող պատասխանել իր ընդդիմախոսներին: Ուստի դրան ձեռնամուխ եղավ Ֆ. Էնգելսը՝ իր «Լրացումներ «Կապիտալի» երրորդ հատորին»<sup>8</sup> աշխատության մեջ: Փորձելով պաշտպանվել արժեքի օրենքի և շահույթի նորմի միջև կապի մարքսյան ենթադրության վրա հիմնված հակասության՝ իտալացի տնտեսագետ Լորիայի քննադատությունից՝ նա չկարողացավ «մրցակցություն» հասկացության մեկնաբանության մեջ խորանալ ավելի, քան Մարքսը: Նպատակը մեկն էր՝ հիմնավորել, որ մրցակցության միջոցով հավելյալ արժեքը ձևավորվում է միջին շահույթի, իսկ արժեքը՝ արտադրության գնի:

Ավստրիացի տնտեսագետ Բեմ-Բավերկը ևս փաստեց «Կապիտալի» առաջին և երրորդ հատորների միջև եղած հակասությունը: Ըստ նրա, «Երրորդ հատորի բովանդակությունը չի կարող գոյություն ունենալ առաջին հատորի շարքում և

<sup>7</sup> К. Маркс и Ф. Энгельс, *նշվ. աշխ.*, հ. 4, Մ., 1955, էջ 166.

<sup>8</sup> Էնգելս Ֆ., Լրացումներ «Կապիտալի» երրորդ հատորին (Կապիտալ, հ. 3, գիրք 3, մաս 2, Ե., 1949, էջ 427-450):

ընդհակառակը: Բայց քանի որ Կ. Մարքսը չի ընդունել այդ, և ընդհակառակը, երրորդ հատորում դեռևս ամբողջությամբ պահպանում է առաջին հատորում շարադրված ուսմունքը, ապա, չնայած երրորդ հատորի գոյությանը, քննադատությունը իրավունք ունի և պարտավոր է առաջին հատորի ուսմունքը համարելու Կ. Մարքսի ներկա և մշտական հայացքների արտահայտությունը: Սակայն նա նաև իրավունք ունի և պարտավոր է համապատասխան տեղերում բերելու երրորդ հատորի ուսմունքը՝ պարզաբանման և քննադատության նպատակով:

Մարքսը ելնում էր այն ելակետից, որ բոլոր ապրանքների արժեքը բացառապես որոշվում է դրանց արտադրության համար անհրաժեշտ աշխատանքի ծախսումներով, ընդ որում, այն ելակետային է Մարքսի ամբողջ ուսմունքի համար, և նա տալիս է դրա մանրակրկիտ հիմնավորումը և լուսաբանումը<sup>9</sup>:

Մեր կարծիքով, «Կապիտալի» առաջին և երրորդ հատորների միջև եղած հակասության վերաբերյալ դրույթն ընդունելի է՝ հետևյալ նկատառումներից ելնելով. 1. Առաջին հատորում Կ. Մարքսն ապրանքների փոխանակության հիմքում տեսնում է դրանց վրա կատարված հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքի քանակությունը (արժեքը), որը «...արտադրության հասարակականորեն նորմալ առկա պայմաններում և տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող աշխատանքի հմտության ու ինտենսիվության միջին մակարդակի պարագայում պահանջվում է մի որևէ սպառողական արժեք պատրաստելու համար»<sup>10</sup>: Կ. Մարքսը, որպես այդպիսին, տեսել է տվյալ ապրանքի վրա արտադրողի ամենաշատ կատարած ծախսումները: Նախ, եթե նույնիսկ ընդունենք, որ ապրանքի արժեքի վերաբերյալ վերոհիշյալ դրույթը գոյության իրավունք ունի, ապա անհնար կլինի դրանով բացատրել հասարակականորեն անհրաժեշտ ծախսումները շուկայական տարբեր (կատարյալ մրցակցության, օլիգոպոլ, մենաշնորհ մրցակցային և այլ) կառուցվածքներում, որոնցում չկա արտադրության ակնհայտ առաջատար մասնակից, քանի որ արտադրության ծավալների հավասարությունը միշտ չէ (ավելի շուտ՝ բացառություն է), որ ապահովում է անհատական ծախսերի հավասարությունը: Երկրորդ, ապրանքի արժեքի հիմքում աշխատանքը դնելը ավելի շուտ կխեղաթյուրի իրական պատկերը, քան ճիշտ տեղեկություն կտա: Օրինակ, համակարգչային տեխնիկայի ի հայտ գալուց հետո գրամեքենան, անկախ դրա վրա կատարված հասարակականորեն անհրաժեշտ աշխատածամանակից, կորցրել է իր արժեքը, քանի որ պահանջարկ չունի: 2. «Կապիտալի» երրորդ հատորում Մարքսն ապրանքների փոխանակության հիմքում դնում է արտադրության գինը: Ըստ նրա, «Հասարակական կապիտալը մրցման միջոցով այնպես է բաշխվում արտադրության տարբեր ոլորտների միջև, որ ամեն մի ոլորտում արտադրության գները կազմվում են միջին կառուցվածք ունեցող այս ոլորտների արտադրության գների օրինակով, այսինքն՝  $=K+KP$  (արտադրության ծախքը, գումարած շահույթի միջին նորմայի ու արտադրության ծախքի արտադրյալը): Բայց շահույթի այս միջին նորման ոչ այլ ինչ է, եթե ոչ տոկոսապես հաշված

<sup>9</sup> **Բэм-Баверк Е.**, *Капитал и прибыль. История и критика теорий процента на капитал (под ред. М.И.Туган-Барановскаго)*, СПб., 1909, с.463.

<sup>10</sup> **Մարքս Կ.**, *Կապիտալ*, հ. 1, Ե., 1954, էջ 45:

շահույթը՝ միջին կառուցվածք ունեցող հիշյալ ոլորտում, որտեղ շահույթը համընկնում է հավելյալ արժեքի հետ: Հետևաբար, շահույթի նորմը արտադրության բոլոր ոլորտներում միևնույնն է ... Ըստ այսմ, արտադրության բոլոր տարբեր ոլորտների շահույթների գումարը պետք է հավասար լինի հավելյալ արժեքների գումարին, և հասարակական ամբողջ արդյունքի արտադրության գների գումարը հավասար լինի նրա արժեքի գումարին»<sup>11</sup>:

Եթե «Կապիտալի» առաջին հատորում Կ. Մարքսն ապրանքների փոխանակության հիմքում դրել է դրանց վրա կատարված հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքը, ապա երրորդ հատորում՝ ապրանքի արտադրության գինը: Հավատարիմ մնալով առաջին հատորում ապրանքի արժեքի հիմքում դրված տրամաբանությանը՝ նա փորձել է արտադրության գինը բացատրել ապրանքի արժեքով: Այդ նպատակով նա ապրիորի ընդունել է, որ պետք է «հասարակական ամբողջ արդյունքի գների գումարը հավասար լինի նրա արժեքի գումարին»: Այս ենթադրությունը զուրկ է տրամաբանությունից: Չի բերվում որևէ հիմնավորում, այլ ընդամենը ենթադրություն է: Երրորդ հատորում կատարած այն եզրահանգումը, որ ապրանքները վաճառվում են արտադրության գնով, նույնպես ոչ միշտ է ճիշտ (կարող են առանձին դեպքեր լինել): Ժամանակակից տնտեսագիտությունն ապացուցում է, որ ապրանքի գնի հիմքում ընկած է առաջարկ-պահանջարկ հարաբերակցությունը: Դեռ ավելին, շուկայական տարբեր կառուցվածքներում գնագոյացումն իրականացվում է տարբեր գործոնների ազդեցության ներքո: Կատարյալ մրցակցության պայմաններում ֆիրմաները հանդես են գալիս որպես «գին ստացողներ»: Շուկայական մեծ իշխանությամբ օժտված սուբյեկտների առկայության պայմաններում վերջիններս են գին սահմանողները: Հետևաբար, արտադրության գինը միշտ չէ, որ ընկած է վաճառքի հիմքում:

## К ВОПРОСУ О МАРКСИСТСКОЙ ИНТЕРПРЕТАЦИИ ЭКОНОМИЧЕСКОЙ КОНКУРЕНЦИИ И МОНОПОЛИИ

МИКАЕЛЯН М. В.

### Резюме

Разработка теоретических основ конкуренции и монополии для стран с переходной экономикой является важной экономической задачей.

Проблема экономической конкуренции и монополии рассматривается еще в ранних работах К. Маркса и Ф. Энгельса. Исходя из того, что конкуренция является мощным двигателем капиталис-

<sup>11</sup> Մարքս Կ., Կապիտալ, հ. 3, գիրք 3, մաս 1, Ե., 1947, էջ 153:

տического развития, они приходят к выводу о неизбежности порождения монополией конкуренции. Конкуренция же порождает монополию.

В первом томе “Капитала” Маркс утверждает, что стоимость товара определяется общественно-необходимыми затратами труда, а в третьем томе указывает, что товар продается по цене производства. Причем, в общности сумма стоимостей всех товаров равняется сумме цен всех товаров.

Следует отметить, что марксистский анализ конкуренции и монополии основан на предположениях и научно не обоснован. Экономисты-марксисты утверждают, что внутриотраслевая и межотраслевая конкуренция приводит к концентрации производства и, в конечном итоге, к обнищанию рабочего класса.

Приверженцы марксистской теории в силу объективных причин не могли раскрыть сущность монополии и конкуренции, поскольку им не были известны современные теории (о фирмах и рынках), а также методы и методологии анализа рынков, способы и формы их регулирования.